Հետաքրքրության ներկայացման Հայտ
(Խորհրդատվական Ծառայություններ– Ընկերությունների Ընտրություն)

Ապրիլ 20, 2016թ.
Հայաստան
Էներգախնայողության Ծրագիր
Դրամաշնորհ No: TF 012163

Առաջադրանքի անվանումը՝ Էներգախնայողության Գործողությունների Ազգային Ծրագրի շրջանակներում հաշվետվությունների համակարգի (reporting system) ձևավորում

Reference No.: EE-CS-24/2015

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել **Համաշխարհային Բանկ/ Գլոբալ Բնապահպանական Ընկերակցությունից Էներգախնայողության Ծրագրի** իրականացման համար, և մտադիր է միջոցների մի մասը կիրառել խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով:

Խորհրդատվական ծառայությունները (“Ծառայություններ”) ներառում են՝ Էներգախնայողության Գործողությունների Ազգային Ծրագրի շրջանակներում հաշվետվությունների համակարգի (reporting system) մշակում:

Աշխատանքների շրջանակը
Խորհրդատուն պետք է՝

Մշակի պաշտոնական տվյալների հավաքագրման և առաջընթացի հաշվետվությունների ներկայացման համակարգ 2-րդ Էներգախնայողության Գործողությունների Ազգային Ծրագրի (ԷԳԱԾ)-ի համար, որոնք կկառավարվեն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (ՀՎԷԷՀ-ի) կողմից:

Իրականացման տևողությունը – 2 ամիս

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության Հիմնադրամը հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին («Խորհրդատուներ») ներկայացնել իրենց հետաքրքրությունը ծառայություններ տրամադրելիս: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, որ իրենք ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձ ծառայություններ մատուցելու համար: Ընտրության չափանիշներն են՝

Խորհրդատուների փորձառությունը էներգետիկ ոլորտի վիճակագրական ուսումնասիրությունների անցկացման գործում - 40 միավոր,

Խորհրդատուների փորձառությունը վիճակագրական ուսումնասիրությունների անցկացման և էներգախնայողության ցուցանիշների վերլուծության գործում - 60 միավոր,

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը պետք է գրավել Համաշխարհային Բանկի Ուղեցույցների 1.9 կետը՝ «Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունում ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում", Հունվար 2011 («Խորհրդատուի ուղեցույց») վրա, որտեղ նշված են Համաշխարհային բանկի քաղաքականությունը և շահերի բախումը:

Խորհրդատուները պետք է միավորվեն այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության կամ ենթախորհրդատվական ձևով՝ բարձրացնելու իրենց որակավորումը:

Խորհրդատուն կընտրվի Որակի վրա հիմնված ընտրություն (ՈՀԸ) մեթոդի համաձայն, որը սահմանված է Խորհրդատուի Ուղեցույցում:

Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով տեղական ժամանակով ժամը 9:00-17:00.

Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել գրավոր ձևով ստորև նշված հասցեով մինչև 2016թ, ապրիլի 29-ը, 17:00 տեղական ժամանակով:

Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ
Տնօրեն՝ Թամարա Բաբայան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11; e-mail: g.zara@r2e2.am
Վեբ կայք՝ www.r2e2.am